



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԵՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 14/18**

29.11.2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**), քննարկելով «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Լիանա Հակոբյան) (այսուհետ՝ Դիմող) 2018 թվականի սեպտեմբերի 24-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ դատարանում քննվող թիվ ՎԴ/14459/05/17 վարչական գործով կիրառման ենթակա «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը՝ վերլուծելով «քննիչ» հասկացության քրեադատավարական նշանակությունը, վերջինիս լիազորությունները և գործառույթները, ինչպես նաև քննարկելով քննչական ենթակայության ինստիտուտը, հանգել է հետևության, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության օրենսգրքով քննիչին վերապահված լիազորություններն իրականացնում են քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները, որոնք առանց որևէ սահմանափակման կամ բացառության իրականացնում են միևնույն գործառույթն ու լիազորությունները: Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ տարբերակում՝ վերը թվարկված քննիչների կատարած աշխատանքի բնույթի ու ծավալի, լիազորությունների շրջանակի առումով, չի կատարում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով տարանջատված են միայն ՀՀ քրեական օրենսգրքիով նախատեսված

հանցագործությունների խմբերը, որոնցից յուրաքանչյուրի կապակցությամբ նախաքննությունն իրականացնում է տվյալ մարմնի քննիչը: Ընդ որում, առանձին դեպքերում հարկային և մաքսային մարմինների քննիչները նախաքննությունն իրականացնում են ՀՀ քրեական օրենսգրքի նույն հանցագործությունների կապակցությամբ, որոնց կապակցությամբ նախաքննություն իրականացնում են նաև վերը թվարկված մյուս մարմինների քննիչները:

Վկայակոչելով կենսաթոշակային և սոցիալական ապահովության ոլորտը կարգավորող տարբեր օրենսդրական ակտեր՝ դատարանը նշել է, որ մեջբերված իրավական կարգավորումները վկայում են, որ ՀՀ օրենսդրությամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք է վերապահվել ազգային անվտանգության, հատուկ քննչական ծառայության և քննչական կոմիտեի քննիչներին, մինչդեռ հարկային և մաքսային մարմինների քննիչների համար ՀՀ օրենսդրությամբ նման իրավունք սահմանված չէ, որպիսի կարգավորմամբ, ըստ Դիմողի դիրքորոշման՝ օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում մի կողմից ազգային անվտանգության, հատուկ քննչական ծառայության և քննչական կոմիտեի քննիչների, մյուս կողմից՝ հարկային և մաքսային մարմինների քննիչների միջև՝ խախտելով խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքը:

Վերոգրյալից ելնելով՝ Դիմողը գտել է, որ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին այնքանով, որքանով ի տարբերություն ազգային անվտանգության, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների, նշված օրենքը երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք չի վերապահում նաև հարկային և մաքսային մարմինների քննիչներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2018 թվականի դեկտեմբերի 4-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

2) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատված անձին:

Սույն մասով սահմանված մասնագիտական աշխատանքային ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում

դատախազի (մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազի տեղակալի, դատախազի օգնականի և դատախազության գիտատեսուցական հաստատությունների՝ դասային աստիճան շնորհված աշխատողների), Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննիչի, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչի, ազգային անվտանգության մարմիններում քննիչի (ներառյալ՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազության քննիչի, քննչական վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետի, պետի տեղակալի), հատուկ քննչական ծառայության ծառայողի, ԽՍՀՄ դատախազության համակարգում դատախազի և քննիչի պաշտոնում աշխատած ժամանակահատվածը, Հայաստանի Հանրապետությունում և ԽՍՀՄ-ում դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է հաշվարկային աշխատավարձի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի մասնագիտական աշխատանքային սրաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է հաշվարկային աշխատավարձի 2 տոկոսը, իսկ մինչև դատախազի պաշտոն զբաղեցնելը աշխատած և մասնագիտական աշխատանքային սրաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել հաշվարկային աշխատավարձի չափը:

Դատախազի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է դատախազի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելավճարի հանրագումարի) 90 տոկոսի չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիները դատախազի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հատուկ քննչական ծառայության ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի, դասային աստիճանի համար տրվող հավելման և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելման հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիները հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հաշվարկային աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ազգային անվտանգության մարմինների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության քննիչների կենսաթոշակային ապահովության հետ կապված հարցերը կարգավորված են համապատասխանաբար «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Հայաստան Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքներով:

Նշված օրենքներով, սակայն, հարկային և մաքսային մարմինների քննիչների կենսաթոշակային ապահովության հարցը կարգավորված չէ, ինչի պարագայում ծագում է ազգային անվտանգության մարմինների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության քննիչների համեմատ հարկային և մաքսային մարմինների քննիչների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու խնդիրը: Ընդ որում, օրենսդրի կողմից այդպիսի տարբերակումը ողջամիտ և արդարացի չէ և չի բխում օրենքով սահմանված օրև է իրավաչափ նպատակից, ինչը հանգեցնում է խտրականության արգելքի սկզբունքի խախտման: Այսպես՝

ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներ համաձայն՝

Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Նշված սահմանադրական նորմերն ամրագրում են օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը, որը նշանակում է՝ «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ տարբերությունների բացառում և «հավասար պայմանների առկայության դեպքում մարդկանց հավասար վիճակ»:¹

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է համարվում 14-րդ հոդվածի նպատակների համար, եթե այն չունի որեւէ օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների եւ հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն (Սահինն ընդդեմ Գերմանիայի (Sahin v. Germany), 2003թ. հուլիսի 08-ի վճիռը):

Քննիչի դատավարական կարգավիճակը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածում: Ընդ որում, քննիչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան, քրեական գործերով իրականացնում է նախաքննություն, ինչը ենթադրում է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունների կատարում և որոշումների ընդունում՝ անկախ գերատեսչական պատկանելիությունից: Այսինքն՝ անկախ նրանից, թե քննիչը հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի, ազգային անվտանգության, թե հարկային կամ մաքսային մարմնի աշխատակից է, իրականացնում է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իր դատավարական լիազորությունները: Այս առումով, վերը նշված բոլոր գերատեսչություններում աշխատող քննիչները պատկանում են «միևնույն կատեգորիայի» անձանց խմբին այնքանով, որքանով վերջիններս օգտվում են օրենքով սահմանված միևնույն դատավարական կարգավիճակից: Ուստի, այս իմաստով խտրականության արգելքի սկզբունքը պահանջում է, որպեսզի բոլոր քննիչների՝ որպես «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ բացառվի տարբերությունների դրսևորումը և սահմանվի վերջիններիս հավասար վիճակը որպես հավասար պայմաններում աշխատող նախաքննության սուբյեկտների, այդ թվում՝ նախատեսվի երկարամյա ծառայության համար կենսաթոշակի իրավունքը բոլոր քննիչների համար հավասարապես՝ անկախ գերատեսչական պատկանելիությունից: Միաժամանակ, եթե պետության մոտեցումն այս հարցում այն է, որպեսզի տարբերակվի քննիչների երկարամյա ծառայության համար կենսաթոշակի իրավունքի ծագման ժամկետներն ու պայմանները՝ կախված նրանից, թե որ մարմնի քննիչ են հանդիսանում, ապա այդպիսի տարբերակումը պետք է հիմնավորվի պետության կողմից իրավաչափ նպատակ հետապնդելու կամ կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև համամասնության ողջամիտ հարաբերակցություն սահմանելու դիրքերից:

Ավելին, **ՀՀ սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝**

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ

¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 174-175:

պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սոցիալական պետության հիմնական խնդիրներից է՝ իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կապահովի հանրության յուրաքանչյուր անդամի համար բավարար կենսամակարդակ, այդ թվում՝ բոլոր այն դեպքերում, որքան իրենից անկախ պատճառներով անկարող է աշխատել: Այդպիսի սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը՝ կյանքի տարբեր իրավիճակներում, երբ որ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը²:

ՀՀ սահմանադրությունը, 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակելով որպես սոցիալական պետություն, 83-րդ հոդվածում ամրագրել և ճանաչել է յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը: Ուստի Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Բացի ՀՀ սահմանադրությունից, սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցչ մասը կազմող միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպիսիք են՝ օրինակ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիան և այլ փաստաթղթեր, որոնց միանալով Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել ճանաչելու և երաշխավորելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

Սոցիալական ապահովության իրավունքին բազմիցս անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.04.2014թ. թիվ ՍԴՈ 1142 որոշման 9-րդ կետում սահմանել է. «... **Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զապ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է**, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը, այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը»:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ 1142 որոշում, կետ 7:

սահմանադրական դրույթի՝ հոդված 37-ի (մինչև 2011թ.ի սահմանադրական փոփոխությունները գործող խմբագրությամբ քննարկվող սահմանադրական նորմն ամրագրված էր Սահմանադրության 37-րդ հոդվածում) հիման վրա սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

«Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ՝ ձևերի ընտրության խնդիրը: **Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:**

Վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից էական է, թե ինչպես են վերոնշյալ հանգամանքները հաշվի առնվել մեր երկրում կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում»:

Կարծում ենք, վիճարկվող օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունքի չնախատեսումը հարկային և մաքսային մարմինների քննիչների համար չի բխում պետության պոզիտիվ պարտականությունից ապահովելու անձի սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացումը:

Սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև **սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության** սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Կենսաթոշակի իրավունքը սոցիալական ապահովության միջոցի իրավունք լինելով հանդերձ, գույքային իրավունք է, սեփականության ձև, որը երաշխավորված է ՀՀ սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներով:

ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը՝ քաղաքացու վաստակած միջոցներ են և նրա սեփականությունը: Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է:

Կենսաթոշակի իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության համատեքստում դիտարկելու մոտեցումն առաջին հերթին արժանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն այդ կապակցությամբ հայտնել է հետևյալ իրավական

դիրքորոշումը. «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականաւորողը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդոլն ընդդեմ Ռուսաստանի գործը): Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել օրենքի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8 և 31 հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդն ամրագրում է. «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»³:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նշել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սույն գործի հանգամանքներով, գտնում ենք, որ խախտվել է նաև անձի սեփականության սահմանադրական իրավունքն այնքանով, որքանով խնդրո առարկա օրենքի գործողության տիրույթում հայտնված անձինք զրկվել են իրենց սեփականությունը հանդիսացող այն կենսաթոշակից, որի նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքը ճանաչված է օրենքի ուժով, կամ նշված անձինք այդ կենսաթոշակը որպես սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք ունեին մինչև այդ կենսաթոշակն իրենց փաստացի չվճարելը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրականը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտրակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականաւորող հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականաւորող հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն**»:

³ ՀՀ սահմանադրական դատարանի 04.10.2006թ. թիվ ՍԴՈ-649 որոշում:

Վերը շարադրված դիրքորոշման վերլուծությունը ցույց է տալիս, որ վիճարկվող օրենքի դրույթն անմիջականորեն միջամտում է հարկային և մաքսային մարմինների քննիչների կենսաթոշակի իրավունքի՝ որպես սեփականության գույքային իրավունքի իրականացմանը, խաթարում վերջիններիս սեփականության անձեռնմխելիությունը: Նման միջամտությունն անձին զրկում է իր վաստակած կենսաթոշակը սեփական հայեցողությամբ, ազատ կամաարտահայտությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավագործություններից:

Օրենսդրական բացի սահմանադրականության կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիփարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համապետքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Սույն սահմանադրական վեճի առարկա հանդիսացող նորմը, խտրականության արգելքի սկզբունքի խախտման հետ միաժամանակ, չի ապահովում անձի սոցիալական ապահովության և սեփականության իրավունքի իրականացումը: Ուստի, այս պարագայում, կարծում ենք, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան